

Բարև, ինձ այդքան մոտ, բայց միևնույն ժամանակ այդքան հեռու ապրող, սիրելի՛ բարեկամ:

Ես Մերին եմ՝ Զինվորի քույր: Հուսով եմ՝ գիտես, թե ինչ է նշանակում լինել զինվորի քույր, եղբայր կամ բարեկամ: Ես չեմ ուզում գիշերը քնել այն վախով, որ առավոտյան կարող եմ վատ լուր լսել սահմանից: Ես չեմ ուզում ամեն անգամ եղբորիցս զանգ ստանալիս լսափողում կրակոցի ձայներ լսել, որի պատճառով ընդհատվում է մեր խոսակցությունը: Ահա այն գլխավոր պատճառը, որ ես գրում եմ քեզ այս նամակը: Եվ գրում եմ մեծ ուրախությամբ ու ոգևորությամբ, քանի որ գիտեմ, որ հարևան երկրում կա ինձ լսող, իմ մտքերը կհսող մարդ: Հնարավոր է՝ դու չհամաձայնես իմ որոշ մտքերի հետ, բայց հավատա՛ կարևորն այն է, որ մենք երկուսս համախմբվել ենք մեկ նպատակի համար. հասնել հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Ի՞նչ է խաղաղությունը: Խաղաղություն տերմինը յուրաքանչյուր ոք կարող է բացատրել յուրովի, բայց և կարծում եմ, որ գրեթե բոլորի մտքերը հանգեցնում են մի գաղափարի:

Մենք բոլորս էլ լավ գիտենք մեր պատմությունը: Մենք շատ բաներ կորցրել ենք, գուցե որոշ բաներ՝ ձեռք բերել, բայց այդ ձեռքբերումները արժեցել են մարդկային կյանքեր: Ես չեմ կարծում, որ աշխարհում կա մի որևէ նյութական բան, կոնֆլիկտ, շահ, որը թանկ արժի և վեր է դասվում մարդկային կյանքից:

Մենք մեղավոր չենք մեր նախնիների արարքների համար, բայց որպես նրանց սերունդներ՝ պատասխանատու ենք այդ արարքների համար: Գուցե և նրանք, ինչպես մենք, չեն ցանկացել պատերազմ, բայց եղել են հանգամանքներ, միգուցե մարդիկ, որոնք նրանց դրդել են պատերազմելու:

Այն, ինչ լինելու է կամ կարող է լինել ապագայում, մենք ենք դրա պատասխանատուն. մենք ենք որոշելու, թե ինչ է լինելու հետագայում: Ուրեմն՝ ինչու՞ չանել բարին, ինչու՞ չլինել բարի:

Մենք մեր նախնիներից ժառանգել ենք պատերազմ, բայց ես վստահ եմ, որ դու էլ չես ուզի, որ մենք մեր երեխաներին ժառանգություն տանք այդ դաժան պատերազմը: Եվ եթե փորձը ցույց է տվել, որ կարող ենք ապրել խաղաղությամբ, ինչու՞ չանել այդպես:

Խաղաղության հասնելու առաջին և կարևոր քայլը արդեն մենք արել ենք. մենք պատրաստ ենք լսել միմյանց, դա ամենակարևորներից մեկն է:

Երկրորդը՝ անցյալում թողնել անցյալը և ապրել ներկայով: Զնայել հետ, չփնտրել մեղավորներ: Ես վերևում նշել եմ, որ մենք մեղավոր չենք մեր նախնիների կատարած քայլերի համար, բայց եթե մենք հիմա էլ անենք այն, ինչ նրանք են արել առաջ, մենք նույնքան մեղավոր կլինենք: Մենք պետք է նայենք առաջ, լինենք լավատես և մշակենք նոր ծրագրեր, որ մեզ քայլ առ քայլ կտանեն խաղաղության:

Երրորդ կարևոր քայլն այն է, որ պետք է մաքրենք սահմանները: Եթե երկնքում չկան փակ սահմաններ աստղերի միջև, ապա ինչու՞ են մարդիկ սահմանները փակում երկրի վրա՝ պետությունների միջև: Բայց նախքան սահմանագծերը քարտեզի վրայից մաքրելը, մենք պետք է բացենք մեր հոգու և սրտի միջև եղած սահմանները, որպեսզի սերը, բարությունը, խաղաղությունը սփռվի աշխարհի վրա: Ուստի՝ արի՛ լինենք այն խաղաղության աղավնիները, որ բարություն կտարածեն ոչ միայն սահմաններից ներս, այլև՝ դուրս: Եվ հետո ոչ հեռու ապագայում, երբ ես կլինեմ հյուր գեղեցիկ Ադրբեջանում կամ դու՝ գեղեցիկ Հայաստանում, մենք կխոսենք երկար: Հպարտությամբ կհիշենք խաղաղության հասնելու համար արված մեր քայլերը: Եվ օրինակ կծառայենք նոր սերնդին և ինչու՞ չէ նաև՝ պատերազմող սերնդի ներկայացուցիչներին և կապացուցենք, որ խաղաղության կարող ենք հասնել առանց զենքի:

Լավագույն խաղաղասիրական մաղթանքներով՝

Քո ընկեր Մերի